ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՀԱՅԱԳԵՏԸ

Կարճատև հիվանդությունից հետո կյանքից հեռացավ բազմավաստակ հայագետ, արևելագետ, պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մաշտոցի անվան Մատենադարանի միջնադարյան մատենագրության և դիվանական վավերագրերի բաժնի վարիչ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Հակոբ Դավթի Փափազյանը:

Հակոբ Փափազյանը ծնվել է 1919 թվականին Իրանի Թավրիզ քաղաքում: 1946 թ. ներգաղթելով Հայաստան, ընդունվում և 1950 թ. ավարտում է Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան բաժինը, այնուհետև Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի ասպիրանտուրան՝ պաշտպանելով նախ թեկնածուական, ապա դոկտորական դիսերտացիաները:

1950-ական թթ.-ից նա նախանձելի մի հետևողականությամբ սկսում է հրատարակել Մատենադարանում պահվող պարսկական դիվանական վավերագրերը, որոնք, միջնադարյան պատմագրության և ձեռագրերի հիշատակարաններից հետո, դարձան հայ ժողովրդի պատմության և մասնավորապես 15-18-րդ դարերն ընդգրկող շրջանի երրորդ կարևոր սկզբնաղբյուրը:

Հակոբ Փափազյանը, սակայն, միայն պարսկերենի լեզվական տարբեր շերտերի նրբերանգներին քաջատեղյակ հնագրագետ և ձեռագրագետ չէր (որը ինքնին շատ մեծ արժանիք է), այլև վավերագրերի հրապարակման իր սկզբունքով բնագրագիտությունը բարձրացրեց պատմագիտության, իսկ պատմագիտությունը՝ ընդհանուր մշակութաբանության աստիճանի՝ իր ուսումնասիրությունները խարսխելով բնագրագիտության, պատմագիտության, արևելյան իրավունքի և իրանական մշակույթի զարմանալի իմացության վրա, որը լավագույնս արտահայտվեց «Ագրարային հարաբերությունները Արևելյան Հայաստանում 15-17-րդ դարերում» մեծարժեք ուսումնասիրությունում, որը նվիրված էր քննվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի պատմության լուսաբանմանը ագրարային հարաբերությունների տեսանկյունից: Աշխատանքում մանրամասնաբար քննվում է հայ ավատական հողատիրության ունեզրկումը 15-16-րդ դարերում և այդ հողային տիրույթների հետագա վիճակը 17-րդ դարում: Հայ եկեղեցական իրավունքի պատմության համար մեծ կարևորություն ունի ուսումնասիրության եկեղեցական հողատիրությանը վերաբերող վեցերորդ գլուխը:

Այն իրողությունը, որ հայկական պետականության անկումից հետո Հայ

Եկեղեցին է ներկայացրել հայ ժողովրդի իրավունքներն ու շահերը օտար տիրողների առջև, Հակոբ Փափազյանը արաբագիր հրովարտակների և կալվածագրերի միջոցով հավաստում է ազգային հարաբերությունների տեսանկյունից, թե հայ աշխարհիկ հողատիրության աստիճանական ունեզրկման պայմաններում ինչպես որոշակի արտոնություններ և իրավունքներ էին վերապահված վանքապատկան կալվածքներին, և թե պարսից արքունիքի ու տեղական խաների հետ բանակցություններում մեր հոգևորականները ինչպես են պայքարել հանուն Հայ Եկեղեցու ունեցվածքի պահպանության, որից գոյացած միջոցներով էին մեծապես իրականացվում ազգային-հոգևոր տարբեր ձեռնարկումները:

Նաև մեր պատմագիտությունում և գրականագիտությունում շեշտվող այն միտքը, որ Հայոց Եկեղեցու Ընդհանրական Աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում արդյունք էր տևական մի աշխատանքի, որն արտացոլվել է Ստեփանոս Օրբելյանի «Կաթողիկեի ողբը» չափածո ստեղծագործությունից մինչև Գրիգոր Տաթևացու և Թովմա Մեծոփեցու ծավալած գործունեությունը, Հակոբ Փափազյանը վերստին հավաստել է նաև հողատիրական իրավունքի տեսանկյունից՝ ցույց տալով, թե ինչպես աստիճանաբար իրենց տնտեսական և քաղաքական դիրքերից զրկվող հայ ֆեոդալական տների հեռատես ներկայացուցիչները, Սյունյաց Օրբելյանների (մասնավորապես՝ Ռուստամ Օրբելյանի) գլխավորությամբ, Էջմիածնի վանքին կատարած յոթ գյուղերի և այլ նվիրատվություններով ստեղծեցին նյութական-տնտեսական այն հիմքը, շնորհիվ որի 1441 թ. ժողովից հետո Հայոց աշխարհի սրտում՝ Արարատյան երկրում գտնվող Ս. Էջմիածնում էր վերահաստատվելու Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը:

Հակոբ Փափազյանն առանձնանում էր ոչ միայն գիտական անվիճելի հեղինակությամբ, այլև քաղաքացիական բարձր և տոհմիկ հայկական նկարագրով, և անխաթար ա՛յս նկարագրով էլ նա կմնա իրեն ճանաչողների հիշողության մեջ:

Հակոբ Փափազյանի մահը կորուստ էր ոչ միայն հայագիտության, այլև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար, որի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամն էր երկար տարիներ:

Ստորև ներկայացնում ենք Մայր Աթոռի Դիվանի և Վեհափառ Հայրապետի ցավակցական խոսքերը՝ Հակոբ Փափազյանի հիշատակին:

ՀԱՐԳԱՆՔ ՀԱԿՈԲ ՓԱՓԱԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Սրտի խոր վշտով իմացանք անսպասելի մահվան մասին Ամենայն Հայոց Կաթողիկոսության՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի երկարամյա անդամ Դոկտ. Հակոբ Փափազյանի:

Հակոբ Փափազյանի անակնկալ մահվամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հայրենի գիտությունը և հայ ժողովուրդը կորցնում են մի վաստակաշատ գիտնական, հայոց ազգային և եկեղեցական պատմության հմուտ մի անձնավորություն, հատկապես իրանագիտության և իրանա-հայկական փոխհարաբերությունների մարզում եզակի մի մասնագետ և նախանձախնդիր հայ մարդ, եկեղեցասեր, մշակութագործ և հայրենանվեր:

Մայր Աթոռը իր խոր վշտակցությունն է հայտնում հանգուցյալ Հակոբ

Փափազյանի տիկնոջը և զավակներին և Փափազյան ընտանիքի բոլոր անդամներին ի Հայաստան և արտասահման:

Մեր ցավակցությունները նաև Մաշտոցյան Մատենադարանի Տնօրինությանը և բոլոր գիտաշխատող իր պաշտոնակիցներին, որոնք կորցրեցին իրենց հարազատ ընկերոջը:

Ցավակցություններ նաև հայ գիտության և կրթության նախարարությանը, որ կորցրեց մի մեծ գիտնականի և դաստիարակի:

Թող Բարձրյալն Աստված նրա բարի հոգին ընդունի երկնքի արքայության մեջ և Ս. Հոգու մխիթարություն պարգևի բոլոր սգավորներին և հատկապես նրա հարազատներին և ծանոթներին:

Կիրակի, նոյեմբերի 2-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, հավարտ Ս. Պատարագի, տեղի է ունենալու հատուկ հոգեհանգստյան կարգ վասն հոգվո հանգուցյալ Հակոբ Փափազյանի, նախագահությամբ Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Խունկ և աղոթք հանգուցյալ Հակոբ Փափազյանի հիշատակին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

29 հոկտեմբեր 1997
Ս. Էջմիածին

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱԿՈԲ ՓԱՓԱԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մի այսպիսի պահ, մի այսպիսի վայրկյան մեզ մղում է մտածելու կյանքի մասին: Ամենքիս վերջը մահն է: Չկա մարդ՝ առանց մահվան: Ոչ ոք անմահ չէ, և մահը մեզնից վեր մի հասկացություն է: Կյանքն է տրված մեզ և կյանքն է մեր կարողության, մեր իմացության և կամ՝ մեր անիմացության առարկան: Այսօր, երբ գտնվում ենք մի այսպիսի դագաղի առջև, ես հոգու պարտք եմ զգում ձեր բոլորի հետ կիսել այն երեք գլխավոր մտածումները, որոնք ինձ այցելում են այս պահին:

Առաջին. Հակոբ Փափազյանը եղավ էությամբ մեծ մարդ, հայագիտության նվիրյալ մի առաքյալ՝ իր կյանքը իմաստավորելով և արժեցնելով հայոց պատմության լուսաբանման, մեր նոր կյանքի պայծառացման հեռանկարով: Իրանագիտության մեջ իրանյան և հայկական սկզբնաղբյուրների, վավերագրերի միջից, կարծեք, հատիկ-հատիկ նյութեր քաղեց և իր հոդվածների, գրքերի տեսքով ընծայեց հայագիտությանը:

Երկրորդ. նա եղավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վեհ ըմբռնումը, նախանձախնդրությունը իր մեջ ապրող և արժեցնող մարդ: Դրա համար երկար տարիներ շարունակաբար, հետևողաբար, դեռևս մեր երջանկահիշատակ նախորդի՝ Վազգեն Ա Կաթողիկոսի, ինչպես նաև Մեր օրոք, նա եղավ Գերագույն Հոգևոր Խորհրդի մշտական անդամը և այդպես էլ կհեռանա այս աշխարհին: Եվ այսօր հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, մեր միաբանության, ես իմ հարգանքի տուրքն եմ ընծայում նրա անմահ հիշատակին և վաստակին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությանը մեջ:

Երրորդ. նա եղավ ընտանիքին նվիրված հայր: Նա եղավ մի հայկական ընտանեկան օջախի, մեր մեծ օջախի, մեր ամբողջական ազգի ընտանիքին մեջ մի վառ, հարազատ, հայկական օջախ ստեղծող անձ: Ես այսօր տեսում եմ, թե ինչպես է նա իր զավակներին փոխանցել այն ոգին, որ ժառանգել էր Պարսկաստանում, Փափազյան մեծ ընտանիքի ավանդից և, ինչպես ոսկե օղակ, փոխանցեց այդ ավանդը իր զավակներին և թոռներին:

Որպես գիտնական, որպես եկեղեցանվեր անձ և որպես ընտանիքի հայր, նրա հիշատակը արժանի է բարձրորեն հարգանքի ու խոնարհության: Ես կոչ եմ անում մեր երիտասարդ սերունդին, որ այսպիսի դեմքերի միջից դիտեն իրենց կյանքը այսօր մեր նորանկախ Հայրենիքում՝ պատասխանատվության, պարտավորության գերագույն գիտակցությամբը, որովհետև Հակոբ Փափազյանը եղավ այդ երեք իրողությունները՝ գիտնական, եկեղեցանվեր անձ և հայր և այդ բոլորը կամարակապող հայոց պետականության, անկախության հավատացող մի ամբողջական հայ:

Կյանքը խորհուրդ է, և ոչ ոք կարող է նախատեսել կյանքը: Ես մտադիր էի այս տարի նրան պարգևատրել «Ս. Սահակ և Ս. Մեսրոպ» շքանշանով: Դա իր ողջության ժամանակ չեղավ: Ինչպես ասում են, հետմահու այս շքանշանը, հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ես գետեղում եմ իր դագաղի վրա և ապա փոխանցում իր զավակին և իր ընտանիքին: